

## Խաչատուր Ազիզյան. Ինպրեսիոնիզմ՝ նորոշյա ընթերցմամբ



«Նկարիչ ծնվում են, թե՞ դառնում», - հարցը, բնականաբար, չունի միանշանակ պատասխան: Այն պայմանավորված է տարբեր հանգամանքներով: ՀՀ վաստակավոր նկարիչ Խաչատուր Ազիզյանի պարագայում, սակայն, այլ կերպ լինել չէր կարող: Չէ՞ որ նա աչք է բացել նկարչի ընտանիքում և հասակ առել նկարիչների շրջապատում: Ապրել են Երևանում հայտնի Կիևյան-24 հասցեում, որը մինչ օրս «Նկարիչների շենք» են կոչում: Դեռ պատանի հասակից էսյուդների է գնացել այնպիսի նշանավոր

արվեստագետների հետ, ինչպիսիք են Սուրեն Սաֆարյանը, Երեմ Վարդանյանը, Սարգիս Բաղդասարյանը, Տիգրան Թոքմաջյանը, ուրիշներ: Հուշեր ունի կապված Երվանդ Քոչարի, Ղուկաս Չուբարյանի, Մկրտիչ Քամայանի, շատ այլոց հետ: Առաջին ուսուցիչն էլ, պարզ է, հայրն է եղել՝ Սուրեն Ազիզյանը, որը, սակայն, ոչ այնքան գիծ քաշել կամ գույն դնել է սովորեցրել, որքան մատնացույց արել գեղեցիկը նկատելու և այն յուրովի վերարտադրելու ճանապարհը:

20 տարեկանում ավարտելով Փանոս Թերլեմեզյանի անվան Գեղարվեստի ուսումնարանը՝ Խաչատուր Ազիզյանը 1968-1974թթ. սովորում է Գեղարվեստաթատերական ինստիտուտում: Ուսումնառությունից անմիջապես հետո սկսում է մասնակցել հանրապետական, համամիութենական և միջազգային ցուցահանդեսների՝ աստիճանաբար հաստատելով իր ոճն ու աշխարհընկալման իր կերպը: Առաջին անհատական ցուցահանդեսը բացել է 1987թ. Արմավիրում, որին հաջորդել են նմանատիպ ցուցահանդեսներ թե՛ արտերկրում (Ֆրանսիա, Իտալիա, ԱՄՆ և այլն), թե՛ մեզանում: Առայժմ վերջինը Ստեփանակերտի պատկերասրահում 2016-ին կազմակերպածն է: Իսկ ամենահիշարժանը դրանից 2 տարի առաջ՝ 2014թ. անհատականը Հայաստանի Նկարչի տան ցուցասրահներում, որտեղ ներկայացված էր Խաչատուր Ազիզյանի ստեղծագործական ողջ հունձքը:

Այդտեղ ինձ շատ տպավորեցին հատկապես նրա վաղ շրջանի ռեալիստական աշխատանքները («Համբույր», «Թող լինի միշտ արևը» և այլն), որոնցում զգալի էր հստակ ասելիքն ու անթաքույց վարպետությունը: Վերջինս նորահաս սերնդին փոխանցելու ներքին ցանկությունն է նկարչին մղել մանկավարժության ասպարեզ. տարբեր տարիների նա դասավանդել է Թերլեմեզյանի անվան ուսումնարանում և Գեղարվեստի ակադեմիայում: Նկարիչ-մանկավարժ է նաև կինը՝ Սվետլանա Սարգսյանը: Նկարում են նաև դուստրն ու որդին, թոռները: «Բայց իրար նման չենք նկարում», - ժպտում է Խաչատուր Ազիզյանը՝ նկատել տալով, որ իսկական մանկավարժը պիտի իր սանի մեջ պեղի-գտնի նրա անհատականությունը և փորձի զարգացնել այն:

...Շատ չի պատահում, երբ նկարչի արվեստանոցն ու բնակարանը նույնանում են: Տվյալ դեպքում Ազիզյանը «քնում-արթնանում է» իր նկարների հետ՝ նրանցից ստանալով օրվա ազդակներն ու ծնունդ տալով նորերին: Նկարակալին մեր մայրաքաղաքը



պատկերող նոր, ուղղաձիգ նկարն էր՝ նվիրված Երևանի 2800-ամյակին: Ճիշտ է, ցուցադրվող աշխատանքները՝ թե՛ հին, թե՛ նոր, երևան են հանում ժանրային տարբեր նախասիրություններ, թեմաներ ու ոճեր, միևնույն է, ուշադիր հայացքի դեպքում ինքը քեզ պարզում ես ազիզանական ձեռագրի հատկանշական կողմերը:



Նկարիչը ստեղծագործում է մանր ու թեթև վրձնահարվածներով, շատ հաճախ՝ պուանտելիստական մաներայով: Արդյունքում՝ առկա է շնչառությունը կտավի մակերեսին, տեսանելի վրձնի աներևույթ շարժումները: Իմպրեսիոնիստների նման նրա նկարներում զգալի է անմիջական տպավորության թրթիռը և գոգենյան ու սեզանյան գույների հայտնի համադրությունը

(«Մերկը», «Լաուրա», «Ինտերիեր՝ կապույտ սափորով» և այլն): Բայց ի տարբերություն գեղարվեստական այս ուղղության հնօրյա ներկայացուցիչների՝ Խաչատուր Ազիզյանի գույները մուգ են ու հագեցած: Հասկապես աչքի է զարնում կապույտը, որը վախճան չունի նրա կտավներում: Այն մերթ «Երեկո» է դառնում, իսկ երբ թանձրանում է, վերածվում «Գիշերվա»: Վերջին 2 գործերի հերոսուհիները մերկիրան կանայք են. առաջինում պատկերված տաք կիրք հիշեցնող կարմիր ֆոնին, իսկ երկրորդում՝ արտացոլված հայելու մեջ:

Այո, կինն ամենուր է Խաչատուր Ազիզյանի նկարներում: Նույնիսկ բնանկարներում քիչ կտեսնես անխառն բնություն: Վերջինս, որպես կանոն, գիրկընդխառն է կանացի ֆիգուրների հետ («Լիճն իմ կապույտ», «Դրախտ», «Յասամանի բուրմունքը», «Երագ» և այլն): Ազիզյանի կանայք, սակայն, ոչ այնքան իրական են ու շոշափելի, որքան երագային ու բանաստեղծական («Խայամի երագը»): Այդտեղից էլ՝ թերևս լույսի ցուլերի այն առատությունը, որով հատկորոշվում են նկարչի գրեթե բոլոր աշխատանքները: «Ասել, թե Խաչատուր Ազիզյանը լույսի հանդեպ զգայուն է, թերի կլինի. այն քնարական իր ներշնչանքի պսակն է, որոնող և տաք խառնվածքը հավասարակշռողը»,- իրավացիորեն գրում է բանաստեղծ Շանթ Մկրտչյանը: Լույսն, իրոք, Աստծո համբույրն է աշխարհի կուպերին...

Ինքը՝ նկարիչը, շատ է սիրում պոեզիա և այն համոզման է, որ արվեստագետը պիտի զարգացած մարդ լինի, իմանա երաժշտություն ու թատրոն, ընդհանրապես՝ արվեստի պատմություն: Ու ամենևին էլ պատահական չէ, որ Խաչատուր Ազիզյանը հաճախ է իր նկարչական տիրույթում «հյուրընկալում» Չարենցին ու Իսահակյանին, մեր մյուս մեծերին: Միգուցե այդ սիրուց են ծնվել այն բազմաֆիգուր կոմպոզիցիաները, որոնցում անցյալի ու ներկայի մեր մշակույթի երևելիներն են, մեր



ազգային հերոսները: Շատերն են հիշում, օրինակ, «Մեր անուշ Հայաստանի կենացը, տղերք» (2009) կտավը, որտեղ Սարյանի բնանկարի խորքի վրա, սեղանի շուրջ



բոլորված մեր 4 մեծերն են՝ Կոմիտասը, Թումանյանը, Իսահակյանն ու Սարյանը:

2011թ. նկարիչը ստեղծեց «Հայաստանը ես եմ» թեմատիկ մեծածավալ աշխատանքը, որտեղ շուրջ վեց տասնյակ մարդ է պատկերված: Հետաքրքիր է գործի ստեղծման հեղինակային պատմությունը. դառնացել էր, որ նոր սերունդը չի ճանաչում իր ազգի մեծերին: Արդյունքում որոշեց նկարել այդ կտավը որպես «հոգու պարտք և հիշեցում»:

անցյալի ու ներկա մեր հայտնի Կենտրոնում Վազգեն Վեհափառն է՝ Գորկիով, Վարդգես Սուրենյանցով ու Վիլյամ Սարոյանով, Գոհար Գասպարյանով ու Վիկտոր Համբարձումյանով, մյուս երևելիներով: Խառնված են, իհարկե, ժամանակները, բայց ոչ երբեք արժեչափն ու խոնարհման անկյունը: Յուրաքանչյուր հայ սերունդ պիտի իմանա նրանց անունն առ անուն: Այդպես ու միայն այդ կերպ է շարունակվելու մեր երթն այս արևի տակ,- սա՛ է մեծադիր այդ կտավի արտահայտած գլխավոր խորհուրդը:

ազգային-հասարակական գործիչներն են: շրջապատված Պարույր Սևակով ու Արշիլ Գորկիով, Վարդգես Սուրենյանցով ու Վիլյամ Սարոյանով, Գոհար Գասպարյանով ու Վիկտոր Համբարձումյանով, մյուս երևելիներով: Խառնված են, իհարկե, ժամանակները, բայց ոչ երբեք արժեչափն ու խոնարհման անկյունը: Յուրաքանչյուր հայ սերունդ պիտի իմանա նրանց անունն առ անուն: Այդպես ու միայն այդ կերպ է շարունակվելու մեր երթն այս արևի տակ,- սա՛ է մեծադիր այդ կտավի արտահայտած գլխավոր խորհուրդը:



Նույն շարքից հիշատակենք ևս 2 նշանակալի գործ՝ «20-րդ դար» և «Շուշի»: Ուրախալի է, անշուշտ, վերջինս տեսնել Շուշիի թանգարանում: Հերթը միգուցե մյուսներինն է...

Ընդգծեմ, որ վերոհիշյալ գործերը բնավ էլ սովորական նկարներ չեն, այլ նկար-պատումներ կամ նկար-հանրագիտարաններ, որոնք գեղարվեստականից զատ ունեն նաև ճանաչողական նշանակություն: Խաչատուր Ազիզյանը խիստ կարևորում է նորահաս սերնդի թե՛ գեղագիտական և թե՛ հատկապես քաղաքացիական դաստիարակությունը: Նա ևս այն կարծիքին է, որ նկարիչ կամ գրող կարող էս և չլինել, բայց քաղաքացի՝ պարտավոր էս: Իր խոհերն ու մտորումները նա արտահայտում է ոչ միայն նկարելով, այլև հրապարակախոսական հոդվածներ գրելով ու դասավանդելով: Նրան, որպես քաղաքացի-արվեստագետի, շատ բան է

մտահոգում՝ սկսած Երևանի կենտրոնում գտնվող Օպերային թատրոնի բեռնախեղումից մինչև հիմարացնելու աստիճանի սերիալները, ոչ պրոֆեսիոնալ երգիչների կատարումների հանրային հեռարձակումից մինչև գռեհիկ հումորն ու ոչ հայեցի խոսքը:

Բայց, անշուշտ, ինքնարտահայտման գլխավոր զենքը Խաչատուր Ազիզյանի համար իր վրձինն է, իր գունաշխարհը՝ մի կողմից խոհափիլիսոփայական, մյուս կողմից՝ քնարական-բանաստեղծական: Այդ երկուսի միահյուսմամբ էլ ընթանում է նրա կյանքը, որի 7-րդ տասնամյակը նա բոլորեց վերջերս: Շնորհավորում ենք:

Լևոն Լաճիկյան